
**ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՅՈՑ ԻԳԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Ա.

Փոխառյալ հայոց իգական անունների համակարգն ինքնատիպ է թե՛ բառակազմական կաղապարներով և թե՛ ծագումնաբանորեն: Հստակ առանձնանալով՝ այն տեղեկություն է հաղորդում յուրաքանչյուր անվան ստեղծման ժամանակաշրջանի, ազգային պատկանելության, ինչպես նաև աշխարհագրական տարածվածության մասին: Հայերենի զարգացման միջին շրջանում այդ անունների ծագումնաբանական կազմը չափազանց խայտաբղետ է, իսկ բառակազմական պատկերը՝ գրեթե միօրինակ: Դրանք առավելապես արաբերենից, թուրքերենից ու պարսկերենից փոխառված հիբրիդային կազմության անուններ են:

Ի տարբերություն անձնանունների՝ տեղանունները չեն փոխառվում, որովհետև «Տվյալ տարածքում որևէ լեզվով կազմված տեղանվան առկայությունը անպայմանորեն արդյունք է այդ լեզուն կրողների գոյության (տեղանվան ստեղծման պահին): Այնինչ, օրինակ, անձնանվան առկայությունը բոլորովին չի ենթադրում այդ անունն ստեղծած էթնիկական տարրի գոյությունը տվյալ տարածքում: Անձնանունը կարող է մուտք գործել նաև մշակութային շփումների շնորհիվ, հաճախ միջնորդավորված երրորդ էթնոլեզվական հանրությամբ»¹:

Օտար, անհասկանալի անունները հարուստ սկզբնաղբյուրներ են ժողովրդական ստուգաբանության համար: Մարդը գիտակցաբար թե անգիտակցաբար հատուկ անվան մեջ իմաստ է որոնում, փորձում է մեկնել այն այնպես, որ անհասկանալին, հնացած կամ օտարալեզու բառը իր լեզվում դառնա հասկանալի, դյուրըմբռնելի, միաժամանակ հեշտ հիշվող²:

Հայտնի է, որ հայերը անուններ են փոխառել ոչ միայն կրոնակից ազգերից, այլև ոչ կրոնակից, մանավանդ իրենց թշնամի ազգերից (պարսիկ, արաբ, թուրք), որ «գերիշխող տարրի բնական ազդեցության հետևանքն է, ազդեցություն, որ ամեն ձևի ու ամեն հանգամանքի մեջ էլ իր գործը տեսնում է, և փոքր, նվաճված ազգերը իրեն է քաշում, իրեն է միացնում»³:

Եթե նախորդ շրջանի փոխառյալ իգական անուններում գերիշխող տարրը պարսկականն էր, ապա ուսումնասիրվող շրջանում (XII-XVI դդ.) պատկերը փոխվում է: Արաբների և թուրքերի քաղաքական գերիշխանությունը պայմանավորում է արաբական ու թուրքական անունների մուտքը հայերեն: Ստորև ներկայացնում ենք սրանցով կազմված տասնյակ հիշատակություններ ունեցած անունները միայն: Իսկ այն անունները, որոնք

¹ **Ջիհանյան Վ. Գ.**, Հայկական լեռնաշխարհի ջրանունները (Հայոց լեզվի պատմության հարցեր, 1991, N 3, էջ 194):

² **Суперанская А. В.**, *Структура имени собственного, М., 1969, с. 12.*

³ **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Ե., 1962, հ. Ե, էջ 350:

մեկ կամ երկու հիշատակություն են ունեցել և հետագայում էլ դուրս են մղվել գործածությունից, քննությունից դուրս ենք թողնում: Ի դեպ, նշենք, որ կազմությամբ երկբաղադրիչ անձնանունների այս կամ այն լեզվից ծագած լինելը ընդունված է խիստ վերապահությամբ, որովհետև սրանց միայն առաջին բաղադրիչն է փոխատու լեզվին պատկանում, իսկ մյուս բաղադրիչները կարող են այլ բնույթի կամ այլ ծագման լինել: Սակավադեպ են այն անունները, որոնց երկու բաղադրիչներն էլ նույն լեզվից են փոխառված, ինչպիսիք են՝ *Բեզի-Խաթուն*, *Բեզիխան*, *Խաթունբեկի*, *Խանում-Խաթուն*, *Փաշաբեզի*, *Փաշախաթուն* (թուրքական). *Գուլջիհան*, *Գուլշահ*, *Շահնուբար*, *Շահիջան*, *Շահգուլ* (պարսկական) և այլն:

Ուսումնասիրվող իգական անունների թիվն այս շրջանում հասնում է շուրջ 887 բառ-միավորի, որոնց մեջ, սակայն, պասիվ գործածություն ունեցողներն ավելի շատ են, քան կենսունակ արմատներով առավել հիշատակություններ ունեցած իգական անձնանունները, որոնք մինչև 170 հիշատակություն ունեն: Սրանք իրենց կազմությամբ առավելապես երկբաղադրիչ կամ հիբրիդային անուններ են, որոնց առաջին բաղադրիչը կազմված է պարսկերեն *գուլ* «վարդ», *խվանդ* կամ *խոնդ* «տեր», *շահ* «թագավոր», *ջան* «հոգի», *ջիհան* «աշխարհ», երկրորդ բաղադրիչը՝ հիմնականում թուրքերեն *դաստա*, *բեզի*, *բուդադ*, *չիչաք*, *փաշա*, արաբերեն *սուրաթ* «դեմք» և այլ բառերով՝ *Գուլիզար* «ոսկեվարդ», *Գուլբահար* «գարնան վարդ», *Գուլբեզի* «վարդիշխան», *Գուլբուդադ* «վարդի ճյուղ», *Գուլդաստա* «վարդափունջ», *Գուլզադա* «վարդածին», *Գուլիբադա* «պարտեզի վարդ», *Գուլիխան* «խանի վարդը», *Գուլիխաս* «ընտիր վարդ», *Գուլիմըսրի* «եգիպտական վարդ», *Գուլինար/Գուլնար* «նռան ծաղիկ», *Գուլխաթուն* «վարդ խաթուն», *Գուլմելիք*, «մելիքի վարդը», *Գուլնաբաթ* «սառնաշաքար», *Գուլնազ* «վարդի նման նազելի», *Գուլշահ* «թագավորական վարդ», *Գուլուստա* «վարդից վեր, գերազանց քան վարդը», *Գուլջինար* «սոսիի ծաղիկ», *Գուլչիչաք* «վարդածաղիկ», *Գուլջիհան* «աշխարհի վարդը», *Գուլսան* «վարդի նման», *Գուլսար/Գուլասար* «վարդագլուխ», *Գուլսուրաթ* «վարդերես», *Գուլփարդ*, *Գուլփաշա* «վարդերի փաշան», *Գուլփարե* «վարդեհատ, վարդի կտոր», *Գուլքան* «վարդերի հանք». *Խոնդադա*, *Խոնդբեկի*, *Խոնդխաթուն*, *Խոնդմելեք*, *Խոնդշահ*, *Խոնդփաշա*, *Խոնդքար*. *Շահալամ* «թագավոր աշխարհի», *Շահադա*, *Շահանդուխտ* «թագավորի դուստր», *Շահգուլ* «արքայավարդ», *Շահզադա* «արքայածին», *Շահխաթուն* «շահի թագուհին», *Շահիջան* (նաև ար.) «հոգու թագավորը», *Շահմելեք*, *Շահնազ* «արքայական նազանք անող», *Շահնուբար* «արքային մատուցելու նուբար», *Շահում* (նաև ար.), *Շահումխաթուն*, *Շահսուլթան* (սրա հակառակը՝ *Սուլթանշահ*, որն արական է), *Շահփաշա*. *Ջանազիզ* (կրճատ՝ *Ջանազ*, *Ջնազ*, *Ջանո*), *Ջանադա* «աղայի հոգին», *Ջանիբեկ* (նաև ար., փոքր՝ *Ջանիկ*), *Ջանխաթուն*, *Ջանխոնդ* (նաև ար.) «քաղցր հոգի», *Ջանփաշա* (նաև ար.) «ծնողների հոգու փաշան» *Ջիհանբախշ* (նաև ար.) «նա, որին Աստված պարգև է տվել

աշխարհին», *Ջիհանբախտ* «աշխարհին բախտ բերող», *Ջիհանխաթուն* «աշխարհի տիկինը» և այլն:

Երբ Հայաստանն ընկնում է արաբական տիրապետության տակ, հայերենն արաբերենից ևս փոխառում է անուններ, որոնք արագ տարածվում են արաբերենի գործած ուժեղ ազդեցության հետևանքով: Դրանց շարքում առանձնանում են երկհիմք անունները, որոնց առաջին բաղադրիչը կազմված է միջին հայերենի խոսակցական տարբերակներում առավելապես գործածվող բարբառային *դովլաթ* «հարստություն», ժողովրդական կամ գրական՝ *սուլթան* «թագավոր», *ալամ* «աշխարհ», *ազիզ* «փառավոր և վեհաշուք անձ, հազվագյուտ բան, թագավոր», իսկ բարբառներում՝ «սիրելի, գուրգուրալի, չքնաղագյուտ», *մելեք* «երեշտակ», *ահլի* «մարդ», *ասլի* «իսկական, հարազատ» և այլն բառերից: Դրանցից են՝ *Ազիզխաթուն*, *Ազիզխնաթ*, *Ազիզշահ*, *Ազիզտիկին*, *Ազիզմելեք*, *Ազիզփաշա*. *Ալամ-խաթուն*, *Ալամշադ* «աշխարհին ուրախացնող», *Ալամշահ*. *Ահլիխաթուն*, *Ահլիմելիք*, *Ահլիփաշա*, *Ասլիզադե*, *Ասլիմելիք*, *Ասլիմելեք*. *Դովլաթխաթուն*, *Դովլաթխանում*, *Դովլաթմելիք*, *Դովլաթշահ* (նաև ար.), *Դովլաթփաշա*., *Մելեքխաթուն*, *Մելեքնագ*, *Մելեքսթի*, *Մելեքտիկին*, *Սուլթանխաթուն*, *Սուլթանխան*, *Սուլթանմելեք*, *Սուլթանջան*, *Սուլթանփաշա*, *Սուլթանբախտ*, *Սուլթանբեկ* (նաև ար.), *Սուլթանգուլի* (նաև ար.), *Սուլթանզադա* և այլն:

Ըստ պատմական տվյալների՝ թուրքական ցեղերը շուրջ 800 տարի իշխել են հայերին: Քաղաքական գերիշխանության այս պայմաններում թուրքերենի ճնշող ազդեցությունն անխուսափելի էր, թեև հայտնի է, որ թուրքերենն առավելապես ազդել է բարբառների վրա: Քննվող անձնանուններում ակտիվ գործածություն ունեն թուրքերենից փոխառված *բեգ* «իշխան», *գոզալ* «գեղեցիկ» և *խաթուն*, *խանում* «տիկին» անձնանվանահիմքերով բաղադրված կազմությունները՝ *Բեգիխաթուն*, *Բեգիխան*, *Բեգիջան*, *Բեգիջիհան*, *Բեգնագ*, *Գոզալադա*, *Գոզալանա*, *Խաթունադա*, *Խաթունբեկի*, *Խաթունզադե*, *Խաթունմամ*, *Խաթունմելեք*, *Խաթունմելիք*, *Խաթուն-Նազե*, *Խաթունշահ* (*Շահիխաթուն*՝ պարսկերեն), *Խաթունջան*, *Խաթունփաշա*, *Խանադա* (*Խանումադա*), *Խանբեկի*, *Խանբաջի*, *Խանում-Խաթուն*:

Բացի վերը նշված երկբաղադրիչ անուններից, կան նաև հասարակ կամ հատուկ անուններից, տեղանուններից առաջացած պարզ՝ *Արմենիա*, *Արման* «փափագ, կարոտ» *Բադդադ*, *Բեհ* «լավ, բարի», *Գուլ*, *Դիլբար* «սրբտագրավ, գեղեցիկ», *Թավրեք*, *Խոշ* «քաղցր, անուշ», *Խվանդ*, *Մինա* «մանրանկարչություն», *Նազ* «նազանք», *Նիազ* «աղաչանք», *Շիրազ* (նաև ար.), *Ջիհան* (նաև ար.) (*Ջիհանգիր* անվան կրճատ ձևը, գործածվել է նաև նոր շրջանում, սրանից է *Ջիհանգիրյան* ազգանունը: Այս անվան *Ջիհան* հնչյունափոխված ձևը որպես արական անուն արդեն պահպանվել է ՀՀ Տավուշի մարզում, նախկին Իջևանի շրջանում). (պարսկական). *Ալամ*, *Դովլաթ* (նաև ար.), *Թամամ* «կատարյալ», *Սանամ* «1. կուռք. 2. սիրուհի», *Միմա* «դեմք, երես», *Սուլթան* «թագավոր» (արաբական). *Գոզալ*, *Խաթուն*, *Խանում*, *Չիչաք* «ծաղիկ» (թուրքական). *-իկ*, *-ի*, *-ե*,

-ստան ածանցներով՝ *Ասլիկ, Բահրի/Բահրիկ* «ծով, ծովային», *Բեգի, Գուլջե* «փոքրիկ վարդ», *ուլի/Գուլե Գուլիկ, Եմենիկ, Խաթունիկ, Խասիկ, Խոշիկ, Մարիկ, Փաշիկ, Գուլիստան* «վարդանոց», *Շահաստան*, ինչպես նաև օտարալեզու և սեփական քերականական ձևերով կազմված իգական անուններ՝ *Գուլան* «վարդեր» հոգնակի ձևից, *Բեգում, Գուլում* «վարդս, իմ վարդը», *Շահում, Ջավահիր* «գոհարներ» (գոհար բառի հոգնակին է, կրճատ՝ *Ջավո, Ջավիկ*), *Մլքեր* (Մելեք անվան հոգն). *Մթեր* (Մթի «տիկին», արաբ.) և այլն:

Ինչպես տեսնում ենք, հիշյալ անուններում թեև գերակշռում են պարսկական, արաբական և թուրքական տարրերը, բայց բոլորն էլ գրեթե գործածությունից դուրս են մղվել, իսկ մի քանիսն էլ պահպանվել են միայն ազգանուններում՝ Դիլբար-Դիլբարյան, Խոնդբար-Խոնդբարյան, Սառա-Սառիկյան, Ալթուն-Ալթունյան, Ղամբար (երկսեռ)-Ղամբարյան, Ղարիբ (երկսեռ)-Ղարիբյան, Նիագ-Նիագյան, Ջանիբեկ (երկսեռ)-Ջանիբեկյան: Սերնդեսերունդ փոխանցվել են որոշ անուններ, որոնք այսօր էլ քիչ թե շատ գործածական են՝ *Մարգուլ* «ամենալավ վարդը», *Գուլնար, Մանամ, Արման* (այժմ՝ ար.), *Մինա, Նուբար (և՛ ար. և՛ իգ.)* (պարսկական), *Ազնես* «մաքուր, պարկեշտ», *Եվա* «կյանք», *Եվգինե* «բարեձնունդ», *Քրիստինե* (հունական), *Եսթեր* «աստղ» (եբր.), *Ռիթա/Ռիտա* (լատ.՝ *Մարգարիտա* անվան կրճ. և փոքշ. ձևը):

Սույն քննությունը հիմք է տալիս ասելու. ա) Անվանադրումը կատարվում է որոշակի հիմունքներով՝ իմաստաբանական, արտասանական, գաղափարախոսական: Միջին շրջանում վկայված փոխառյալ իգական անուններում իմաստաբանական և արտասանական տեսակետից առանձնա- նում են *գուլ*-ով կազմվածները: Ընտրյալ ձևույթը, օժտված բանաստեղծականությամբ, առանձնակի գրավչություն է հաղորդում անվանը, պետք է խոստովանել նաև, երբեմն՝ անվանակրին: Փաստ, որ խոսում է նաև անվանահմայության մասին: բ) Եթե կազմությամբ պարզ անունների ընտրությունն ազատ է, բաղադրյալներինը ավանդական է, քանի որ վերջիններիս հիմքում շատ հաճախ ընկած են համեմատությունները, փոխատու լեզուն կրող ժողովրդի կյանքի զանազան յուրահատկությունները, ազգային սովորույթները: Օրինակ, թուրքերենում հատուկ ընդգծված հարգանքն արտահայտելու համար իրենց անուններից հետո ավելացնում են *խանում* կամ *խաթուն՝ Աղախանում, Խոշխաթուն, Ջանխաթուն, Մուլթանխաթուն* և այլն, որոնք ի սկզբանե չեն ծառայել որպես բարդ բառի երկրորդ բաղադրիչ: գ) Անունների լեզվական տեղեկատվությունը չի սահմանափակվում միայն նրա լեզվական պատկանելությամբ, այն կարող է միաժամանակ տեղեկություն հաղորդել նրա տարածքային տարածվածության մասին: Օրինակ, *Գուլիստան*-ը տարածված էր Արցախում, *Գուլիկ, Գուլբեսեր* անունները՝ արևմտահայերի, *Գուլիզար*-ը՝ տաճկահայերի մեջ և այլն: Իսկ *Գուլնար* անունը, որը պարսկերենում ևս անձնանուն էր, այժմ գործածական է Թալինում: Տավուշի մարզի նախկին Իջևանի շրջանում անցյալ դարում էլ գործածական էր *Գուլխանում* անունը: դ) Կան վերաբերմունքային ածանցներով կազմված անհայտ ծագման

անուններ՝ կրճատված նախատիպ բաղադրյալ ձևերից, որոնք իմաստի մթագնման պատճառով չեն պահպանվել: Այդ անուններից են՝ Թամթի, Թամթիկ, Թամիկ, Թայիկ, Թենի/Թենիկ, Թոխի, Հեջիկ, Ճաշիկ, Ճութիկ, Մահի, Մարուկ, Մարուշ, Մորե, Մումե, Շաղակուկ, Սալնճուկ, Սոնդիկ, Վարճիկ և այլն: Ե) Սակավադեպ են իգական, ինչպես նաև արական անուններից ածանցված կամ կրճատված իգականները՝ *Մլքե<Մուլք* «հարստություն, ինչք» իգական անունից, *Շամիկ<Շամիրամ*, *Սեմիկ* (<Սեմիգար «արծաթ, ոսկի»), *Խոնդիկ<Խուանդ*, *Գրիգորիկ*, *Մար<Մարի*, *Շահանդուխտ*, *Ստեփանի/Ստեփանուհի<Ստեփան*: Հանդիպում են նաև երկսեռ անուններ՝ *Ազիզ*, *Աղաբեզ*, *Նուբար*, *Շահրիկ* (ծագ. անհայտ), *Շահիջան*, *Շիրազ*, *Ջանիկ*, *Ջանխոշ*, *Ջանփաշա*, *Ջիհանբախշ*, *Սատրիկ* (*Սադրամելիք*՝ իգ.), *Փաշիկ* (*Փաշա*), *Փարի* «պարիկ, գեղեցկադեմ ոգի» և այլն:

Կան անուններ, որոնց սեռը չի արտահայտվում ոչ իմաստով, ոչ էլ քերականորեն (բացի -դուխտ, -ուհի իգականակերտ ձևություններով կազմվածներից), այլ դրանց հիմքում ընկած է անվանադրի սուբյեկտիվ վերաբերմունքը: Նկատելի է նաև, որ *ջան*-ով կազմված անունների մեծ մասը երկսեռ են, քանի որ վերաբերմունքային կամ փաղաքշական այս բառով դիմում են բոլորին՝ առանց հաշվի առնելու տվյալ մարդու սեռը: *Ջան*-ը ժողովրդախոսակցական լեզվում հոմանիշ է եղել -իկ մասնիկին⁴: Վերջինըս հավասարապես թե՛ արական, թե՛ իգական անուններ է կազմում: Գ) Անձնանուններն ունեն կազմության յուրահատուկ լեզվական օրենքներ և անձնանվանահիմքերի յուրահատուկ ընտրանի: Հայերենի զարգացման միջին շրջանում հիշատակված հայոց իգական անունները առանձնանում են ծագումնաբանորեն, բառակազմական ինքնատիպ կաղապարներով ու անձնանվանահիմքերի իմաստային դաշտերով: Եթե ուժ, համարձակություն, փառք ցույց տվող բառարմատներով կազմվում են արական անուններ, ապա նազանք, քնքշություն, կանաչություն նշանակողները բնորոշ են միայն իգականներին: Ավելին, ծաղկի, գեղեցիկ կենդանիների (Սիրամարգ, Հեղնար), ինչպես նաև թանկարժեք քարերի անուններ տղաներին չեն տալիս: Օրինակ, վարդը՝ իր տարբեր բնութագրումներով (զարնան վարդ, ոսկեվարդ, ընտիր վարդ, թագավորական վարդ, եգիպտական վարդ և այլն) իգական անունների յուրահատուկ շարք է կազմում՝ *Գուլբահար*, *Գուլիզար*, *Գուլիխաս*, *Գուլշահ*, *Գուլիմարի* և այլն: Իրենց թվաքանակով գերազանցում են բարդ կամ երկբաղադրիչ անունները: Ըստ արտադրողականության՝ ակտիվ են **գուլ**, **խաթուն**, **սուլթան** անվանաստեղծ հիմքերը և -իկ փոքրացուցիչ-փաղաքշական ածանցը:

⁴ Ավետիսյան Ս., Հայկական ազգանուն, Ե., 1987, էջ 146:

**ЗАИМСТВОВАННЫЕ АРМЯНСКИЕ ЖЕНСКИЕ ИМЕНА СРЕДНЕГО
ПЕРИОДА ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА**

ХАЧАТРЯН А. А.

Резюме

Заимствованные женские имена среднего периода исторического развития армянского языка (XII-XVI вв.) бывают простыми (коренными) и составными. Гораздо чаще встречаются сложные гибридные имена, состоящие из двух компонентов. Этимология этих имен разнообразна. Женские антропонимы создавались на основе турецких, арабских либо персидских слов, заимствованных как литературным языком, так и диалектами.